

ՎԵՐԱԿԱՆՔՆԵԼ ԿՈՐՅՐԱԾ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Վերամիավորվել Աստծո հետ

Մաս 1

«Ով Աստված, մի հեռանար ինձանից.» Մաղմոս 71:12

Լողացող կացնի հրաշքը

«Եվ մարգարեի որդիքն ասեցին Եղիսէին. Ահա այս տեղը՝ ուր որ մենք բնակվում ենք քո առաջին, մեզ համար նեղ է: Թող գնանք մինչև Հորդանան, և ամեն մեկս վեր առնենք այնտեղից մեկ գերան, և այնտեղ մեզ համար տեղ շինենք այնտեղ բնակվելու. և նա ասաց. Գնացեք... և եկան Հորդանան և ծառերը կտրում էին: Եվ մեկը գերանը կտրելիս տապարի երկաթն ընկավ ժուրը, և նա գոչելով ասեց. Վա՛յ, տեր իմ, նաև փոխ առված էր: Եվ Աստծո մարդն ասեց. Ո՞ր ընկավ. և նա տեղը նրան ցույց տվավ. նա էլ մի փայտ կտրեց և զցեց այնտեղ, և երկաթին լողալ տվավ: Եվ ասեց. Այդ վեր առ. նա էլ ձեռքը մեկնեց ու վեր առավ նրան.» Դ Թագավորաց 6:1-7

Երբ կորցրել ես "Կտրող գործիքը"

1- Ընդունիր, որ կորցրել ես այն

«Եվ մեկը գերանը կտրելիս տապարի երկաթն ընկավ ջուրը, և նա գոչելով ասեց. Վա՛յ, տեր իմ, նաև փոխ առված էր.» Դ Թագավ 6:5

«Բայց քո դեմ այս ունեմ, քո առաջին սերը թողել ես: Արդ հիշի՛ր, թե որտեղի՛ց վայր ընկար, ու գողա՛ և նախկին գործերն արա՛, ասպա թե ոչ շուտով կգամ քեզ մոտ և քո ճրագակալն իր տեղից կշարժեմ, եթե չասպաշխարես.» Հայտնություն 2:4-5

«Եվ քիչ էր մնացել որ ոտներս ծովէին, և բան չեր մնացել որ գնացքս սահեր.» Մաղմոս 73:2

2- Հասկացիր թե որտեղ ես կորցրել այն

«Եվ Աստծո մարդն ասեց. Ո՞ր ընկավ. և նա տեղը նրան ցույց տվավ.» Բ Թագավորաց 6:6ա

Պատճառները

- Ապակենտրոնացում/Զբաղվածություն
- Անհնազանդություն – չես անում այն, ինչ-որ Աստված է ուզում որ անես
- Հենվել քո սեփական ուժերի վրա/Հպարտություն
- Անհոգություն/ծուլություն

3- Սպասիր որ Աստված այն վերադարձնի

«նա էլ մի փայտ կտրեց և զցեց այնտեղ, և երկաթին լողալ տվավ:» Բ Թագավորաց 6:6բ

«Մարդկանց կողմից դա անկատելի է, բայց Աստծու կողմից ամեն բան կարելի է:» Մատթեոս 19:26

«Այսպես է ասում Տերը. Եթե դարձի գաս, ես քեզ ետ կբերեմ. իմ առաջին կկանգնես.» Երեմիա 15:19

4- Ձեռքդ մեկնիր և վերցրու այն

«Եվ ասեց. Այդ վեր առ. նա էլ ձեռքը մեկնեց ու վեր առավ նրան.» Դ Թագավորաց 6:7

«Իմ անձը ցանկանում է և փափակում Տիրոջ սրահներին, իմ սիրտը և իմ մարմինը ցնծում են կենդանի Աստծով:» Մաղ 84:2

«Դարձրու մեզ, ով մեր փրկության Աստված.» Մաղմոս 85:4

«Դարձյալ տուր ինձ քո փրկության ուրախությունը.» Մաղ 51:12

«Եղբայրնե՛ր, եթե ձեզանից մեկը ճշմարտության ճանապարհից մոլորվի, իսկ մեկ ուրիշը նրան հետ դարձնի.» Հակոբոս 5:19

Այս շաբաթ ում կարող եմ օգնել, որ Աստծո հետ վերամիավորվի